UNHCR
The UN Refugee Agency

ՀՀ ՆԳՆ
Միգրացիայի և
քաղաքացիության
ծառայություն

Հաճախ տրվող հարցեր

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) փախստականի կարգավիճակ ունեցող անձանց՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացի վերաբերյալ

Արդյո՞ք ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձն իրավունք ունի դիմելու ՀՀ քաղաքացիություն ստանալու համար:

Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձը, ով առնվազն 18 տարեկան է, իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը [1]

Ո՞ւր պետք է դիմի անձը:

ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմումը և սահմանված փաստաթղթերը ներկայացվում են՝

1. Հայաստանի Հանրապետությունում՝ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն.
2. արտերկրում՝ Հայաստանի Հանրապետության դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության իմացության պահանջը չի կիրառվում ազգությամբ հայ դիմումատուների նկատմամբ:

Ինչ՞ փաստաթղթեր պետք է ներկայացվեն:

Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձը Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար պետք է ներկայացնի՝

1.

Դիմումի ձևը լրացվում է հայերեն: Այն լրացնելու հարցում աջակցություն կարող եք խնդրել Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից, ինչպես նաև կարող եք դիմել իրավաբանական օգնության:

2. 35 x 45 մմ չափի 6 լուսանկար (գունավոր),
3. Ծննդյան վկայականը և դրա պատճենը,
4. Փախստականի կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,
5. Պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ (1000 ՀՀ դրամ):

Եթե առկա է ամուսնություն, և դիմողը կրում է ամուսնու ազգանունը, ապա անհրաժեշտ է ներկայացնել նաև՝

6. Ամուսնության վկայականը և դրա պատճենը,
7. Ամուսնու անձնագրի պատճենը և հայերեն թարգմանությունը:

Ի՞նչ լեզվով պետք է ներկայացվեն փաստաթղթերը:

Փաստաթղթերը պետք է լինեն հայերեն: Պահանջվող փաստաթղթերը օտար լեզվով լինելու դեպքում դիմողը պետք է ներկայացնի նաև նոտարի կողմից վավերացված հայերեն թարգմանությունները:

Որքա՞ն ժամանակ է պահանջվում դիմումը քննարկելու համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության համար դիմումները քննարկվում են ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն ներկայացնելու օրվանից 90 (իննսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

Ինչպե՞ս է ստուգվում ՀՀ Սահմանադրության իմացությունը:

ՀՀ Սահմանադրության իմացությունը ստուգվում է թեստավորման միջոցով:

բաղկացած է 33 հարցից: Թեստի յուրաքանչյուր հարց ունի երեք ենթադրյալ պատասխան, որոնցից միայն մեկն է միանշանակ ճիշտը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար թեստը դիմողին տրամադրում է ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը: Եթե դիմողը հայերեն չի կարդում, թեստը լրացնելու ժամանակ նա կարող է օգտվել իր ներկայացուցչի աջակցությունից:

Թեստը լրացվում է տեղում, որի համար տրամադրվում է մեկ ժամ ժամանակ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը ծանոթ է համարվում այն անձը, ով ճիշտ է պատասխանել թեստի հարցերի կեսից ավելիին:

Թեստի հարցերի կեսից ավելիին ճիշտ չպատասխանելու դեպքում տվյալ անձը կարող է հաջորդ օրը կամ, տվյալ անձի ցանկությամբ, ցանկացած այլ աշխատանքային օր կրկին լրացնել թեստը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար դիմած անձը կարող է այնքան անգամ լրացնել թեստը՝ մինչև ճիշտ պատասխանի թեստի կեսից ավելի հարցերին:

Ե՞րբ է մերժվում ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է, կամ առկա է հիմնավոր կասկած, որ կարող է վնասել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունը և բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները, պատիվը և բարի համբավը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել:

Քաղաքացիություն շնորհելու մերժումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ մերժման մասին ծանուցվելուց հետո երկամսյա ժամկետում:

Ինչպե՞ս է փախստական ճանաչված երեխան ձեռք բերում ՀՀ քաղաքացիություն:

Այն երեխաների դեպքում, որոնք ծնվել են նախքան ծնողի կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած ծնողների երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝

1) եթե առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, կամ
2) եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է ծնողներից մեկի համաձայնությունը, կամ
3) եթե ծնողների (ծնողի) համաձայնության բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում երեխան դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա:

Այն երեխաների դեպքում, որոնք ծնվել են ծնողի կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալուց հետո.

Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են եղել, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին եղել է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իսկ մյուսն անհայտ է կամ՝ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին եղել է Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, իրավունք ունի ձեռք բերելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝ ծնողների գրավոր համաձայնությամբ:

Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝

1) եթե նա ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ
2) եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ

3) եթե բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և առկա է ծնողներից մեկի համաձայնությունը:

Ինչպե՞ս կարող է երեխան, որի ծնողները հայտնի չեն, Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերել:

Հայաստանի Հանրապետությունում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են, Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Ծնողներից մեկի կամ խնամակալի գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել օրենքին համապատասխան:

Ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Հայաստան, ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղամաս, 17/10 շենք

+374 10 590 738

mcs@gov.am

https://migration.am/

Դիմե՛ք **ՀՀ փաստաբանների պալատ՝** իրավաբանական օգնության համար, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու համար դիմումը լրացնելու հարցում:

Հայաստան, Երևան 0010, Զաքյան 7-2, 2-րդ հարկ

+374 10 600 714, +374 33 600 714

pashtpan@advocates.am

www.hpg.am

Հարց 1. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է՝

1) կուսակցություններին
2) ժողովրդին
3) ՀՀ կառավարությանը

Հարց 2. Ինչպիսի՞ պետություն է Հայաստանի Հանրապետությունը՝

1) ժողովրդավարական.
2) խմբավարական
3) միապետական

Հարց 3. Հայաստանի Հանրապետությունում ո՞րն է համարվում օրենսդիր մարմին՝

1) դատարանները
2) ՀՀ Ազգային ժողովը
3) կուսակցությունները

Հարց 4. Հայաստանի Հանրապետության պետական լեզուն՝

1) անգլերենն է
2) հայերենն է
3) ռուսերենն է

Հարց 5. Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝

1) կարմիր, կապույտ, սպիտակ գույներով
2) կարմիր, կանաչ, սպիտակ գույներով
3) կարմիր, կապույտ, նարնջագույն գույներով

Հարց 6. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը՝

1) Գյումրին է
2) Երևանն է
3) Էրեբունին է

Հարց 7. Ո՞վ է նշանակում նախարարին՝

1) կուսակցությունները
2) Հանրապետության նախագահը
3) ՀՀ արդարադատության նախարարը

Հարց 8. Բոլորը հավասար են՝

1) միմյանց առջև
2) օրենքի առջև
3) միայն դատարանի առջև

Հարց 9. Մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ՝

1) հանցանք կատարած անձի դեմ
2) իր ընկերների դեմ
3) իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ

Հարց 10. Նշվածներից ո՞վ կարող է ընտրվել Հանրապետության նախագահ՝

1) քառասուն տարին լրացած, վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք
2) քսանհինգ տարին լրացած, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք՝ անկախ քաղաքացիությունից
3) քառասուն տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք

Հարց 11. Նշվածներից ո՞վ կարող է ընտրվել պատգամավոր՝

1) քսանհինգ տարին լրացած, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք՝ անկախ քաղաքացիությունից
2) քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք
3) քսանհինգ տարին լրացած, վերջին երկու տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին երկու տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք

Հարց 12. Քանի՞ տարի ժամկետով է ընտրվում ՀՀ Ազգային ժողովը՝

1) հինգ տարի ժամկետով
2) ցմահ
3) ութ տարի ժամկետով

Հարց 13. Նշվածներից որո՞նք են համարվում Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներ՝

1) շրջանները և գավառները
2) շրջանները
3) մարզերը և համայնքները

Հարց 14. Ո՞վ է իրականացնում Հայաստանի Հանրապետությունում ներքին քաղաքականությունը՝

1) ՀՀ կառավարությունը
2) ժողովուրդը
3) դատարանը

Հարց 15. Ո՞վ է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին որոշումը՝

1) ՀՀ Ազգային ժողովը՝ պատգամավորների առաջարկությամբ
2) ՀՀ վարչապետը՝ ՀՀ Ազգային ժողովի առաջարկությամբ
3) ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ կառավարության առաջարկությամբ

Հարց 16. Նշվածներից ո՞վ ունի անձնական ազատության իրավունք՝

1) միայն ՀՀ քաղաքացին
2) յուրաքանչյուր ոք
3) ոչ ոք

Հարց 17. Նշվածներից ո՞վ ունի նամակագրության գաղտնիության իրավունք՝

1) միայն ՀՀ քաղաքացին
2) յուրաքանչյուր ոք
3) ոչ ոք

Հարց 18. Նշվածներից ո՞վ ունի կրթության իրավունք՝

1) յուրաքանչյուր ոք
2) միայն ՀՀ քաղաքացին
3) միայն լավ սովորողը

Հարց 19. Նշվածներից ո՞վ ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք՝

1) յուրաքանչյուր ոք
2) միայն ՀՀ քաղաքացին
3) ոչ ոք

Հարց 20. Նշվածներից ո՞վ ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք՝

1) միայն ՀՀ քաղաքացին
2) յուրաքանչյուր ոք
3) ոչ ոք

Հարց 21. ՀՀ Ազգային ժողովի ընտրությանը և հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն՝

1) յուրաքանչյուր ոք
2) ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած օտարերկրացիները
3) ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիները

Հարց 22. Նշվածներից ո՞վ ունի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունք

1) միայն ՀՀ քաղաքացին
2) յուրաքանչյուր ոք
3) ոչ ոք

Հարց 23. Նշվածներից ո՞վ ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք՝

1) միայն ՀՀ քաղաքացին
2) յուրաքանչյուր ոք
3) ոչ ոք

Հարց 24. Նշվածներից ո՞վ ունի մտքի ազատության իրավունք՝

1) միայն ՀՀ քաղաքացին
2) յուրաքանչյուր ոք
3) ոչ ոք

Հարց 25. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է՝

1) ազգային անվտանգության մարմնի որոշմամբ
2) օրենքով
3) կուսակցությունների որոշումներով

Հարց 26. Նշվածներից ո՞վ է պարտավոր օրենքով սահմանված կարգով մասնակցել ՀՀ պաշտպանությանը՝

1) ՀՀ քաղաքացին
2) յուրաքանչյուր ոք
3) ոչ ոք

Հարց 27. ՀՀ կառավարությունը կազմված է՝

1) ՀՀ վարչապետից, ՀՀ փոխվարչապետերից և ՀՀ նախարարներից
2) ՀՀ վարչապետից, ՀՀ նախարարներից
3) ՀՀ վարչապետից և ՀՀ մարզպետներից

Հարց 28. Ի՞նչ կարգով են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերում ազգությամբ հայերը՝

1) պարզեցված
2) ընդհանուր
3) առանց որևէ կարգի

Հարց 29. Ո՞վ է հրավիրում և վարում ՀՀ կառավարության նիստերը՝

1) ՀՀ Ազգային ժողովի նախագահը
2) ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը
3) ՀՀ վարչապետը

Հարց 30. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվում է՝

1) ՀՀ կառավարության կողմից
2) ՀՀ սահմանադրական դատարանի կողմից
3) հանրաքվեի միջոցով

Հարց 31. Ո՞ւմ կողմից է ընտրվում Հանրապետության նախագահը՝

1) ժողովրդի
2) ՀՀ Ազգային ժողովի
3) ՀՀ կառավարության

Հարց 32. Ո՞վ իրավունք ունի առաջադրելու Հանրապետության նախագահի թեկնածու՝

1) պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը
2) ՀՀ վարչապետը
3) ՀՀ Ազգային ժողովի նախագահը

Հարց 33. Ո՞վ է ընտրում վարչապետին՝

1) ժողովուրդը
2) ՀՀ մարզպետները և ՀՀ նախարարները
3) ՀՀ Ազգային ժողովը

Թեստը հանձնեց	_____ (ստորագրությունը)		_____ (անունը, ազգանունը)
Թեստը ընդունեց	_____ (ստորագրությունը)	_____ (պաշտոնը)	_____ (անունը, ազգանունը)
			_____ 20____ թ.